

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

«ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ»

Ստորև ներկայացուող մեծարանքի խօսքը կարդացուած է Դեկտեմբեր 1-ին, Վերտուկօ Հիլզ Քլապի սրահին մէջ, Փրոֆ. Ռազմիկ Մադոյեանի 1988 Դեկտեմբեր 7-ի զոհերու յիշատակին նուիրուած «Յուշամատեան»ի գինեձօնին առիթով, նախաձեռնուած Գիւմրիի Հայրենակցական Միութեան կողմէ: Ընորհաւորելի աշխատութիւն և նախաձեռնութիւն:

* * *

Մեծարգոյ Ռազմիկ Մադոյեան,

Սիրով ու երկիւղած պատկառանքով ձեռքս առայ 1988, Դեկտեմբեր 7-ի մեծ հրկրաշարժի տասնամեակին ձօնուած «Յուշամատեան»ը:

Մատենիդ շապիկը յուշում էր նրա անուրախ բովանդակութեան մասին: Սեւ խորքի վրայ առաւել թանձր սեւով երիզուած պատկեր է. տիրականօրէն կամային մի մայր, վիշտը ատամների տակ պինդ սեղմած, եւ վախից ահաբեկ երեք մանուկներ թեւերի մէջ, տագնապով ու սեւեռաբիւր նայում են միեւնոյն կէտին, հաւանաբար իրենց կործանած տան աւերակներին, ուր թաղուել-մնացել է խմբանկարում բացակայող հայրիկը: Իսկ կայծակի հրահուր խուրձը գիգզգզաձեւ թրատել-ճեղքոտել է նկարը:

Արդարեւ, աղէտներ ու կործանումներ շատ տեսած հայ ժողովրդի պատմութեան մէջ մեծագոյն աղէտ-կործանումներից էր 1988, Դեկտեմբեր 7-ին պատահածը, որը հիմքից սասանեց փոքրիկ

մեր երկիրը, իր ետին թողնելով հազարների հազարով բազմապատկած նահատակութիւն, որբութիւն, այրիացում, մարմնական եւ հոգեկան հաշմանդամութիւն լեռնակուտակ վիշտ, ծով արցունք եւ աղեխարշ, սրտամրմուռ հառաչանք:

«Յուշամատեան»դ բացել ես Նարեկացու Աստծուն ուղղած մի խորիմաստ աղերսանքով. «Շնորհ արա ինձ, որ օրհնեալ կամքիդ բարեհաճութեամբ սկզբնաւորուած աղերսամատեանն այս ողբերգութեան հասնի աւարտին»:

Այո՛, Նարեկացուց փոխ առած աղերսանքով միայն բացել-սկզբնաւորել ես քո «Յուշամատեան»ը, իսկ այն աւարտին ես հասցրել հեղինակի քո սեփական կամքին, տաղանդին ու մեծ նուիրումին գումարած ժողովրդական իմաստութիւնը, որ ասում յորդորում է. «Ո՛չ ոք ողբալով վշտին չի յաղթի», եւ ապա՝ «Մեծ վշտին մեծ խելք է պէտք»:

Ոսկի խօսքեր՝ արդարեւ:

Եւ դո՛ւ, որդեկորոյս հայր, մեծ վշտին դէմ արած հզօր կամքդ եւ աստուածատուր մեծ խելքըդ, յանձն առար եւ ուժ գտար քո մէջ պատմելու աշխարհին հազար-հազարների եղերականօրէն ընդհատուած կեանքի ու ճակատագրի, անկատար մնացած երազների, սէրերի ու կարօտների մասին, ցաւած հոգուդ խորքերում անթեղած սեփական վիշտը:

Համընդհանուր աղէտի ու նահատակութեան այս տխուր համապատկերում վկայող-տարեգրողի քո սուր աչքը նկատել, վեր հանել եւ ի ցոյց է դրել իրերօգնութեան, գլխարտութեան, ինքնազո-

հաբերման, կանանց, ծերերի ու մանուկների նկատմամբ անձնուէր հոգատարութեան եւ ասպետական վերաբերմունքի գեղեցիկ, վեհ ու վսեմ անհամար դէպքեր, արարքներ եւ իրողութիւններ, որոնք եթէ նահատակների համար անձնական ինքնակայ արժանիքներ էին, մտնելով այս պատկառելի մատեանի շարադրանքի մէջ, գալոց սերունդների համար կը լինեն վարքի սրբազան օրինագիրք, կեանքի բարեյոյս ուղենիշ:

Կարգալով «Յուշամատեան»դ ուշիմ ընթերցողը գոհունակութեամբ կը հաստատի եւս մի կարեւոր ճշմարտութիւն. այն, որ դու քո շրջապատի մարդկանց, կամ Թումանեանի խօսքով, քո «Մերոնք»ը ճանաչում ես անհատ առ անհատ, անուն առ անուն եւ որ կարեւորն է, գիտես ու հասկանում ես նրանց ինքնօրինակ հոգեբանութիւնը, վարքն ու բարքը հոգեբանի հմտութեամբ: Որ դու սիրում ես նրանց հարազատի չպարտաւորեցնող սիրով: Ահա թէ ինչու նրանց մասին ասած-պատմածներդ, կարծիք-դատողութիւններդ հաւաստի են այնքան: Ասուածի համար խօսուն օրինակ է հարսանիքի նկարագրութիւնը:

Դ՛ո՛ւ, որդեկորոյս հայր, հարսանեաց սեղանի թամատա: Սուգի ու սեւերի մէջ՝ կեանքի, հին բարի սովորոյթների, բացարտութեան, ու ծիծաղի կարօտած երիտասարդների շրջապատ: Եւ ահա, այս շրջապատում կենաց բաժակ բարձրացնում, խօսում, պատմում, պատգամում ես.

- «Խմում են լուռ, անձայն, անբառ: Արտասուել, անշուշտ, կարող են, սակայն դա էլ «մտքի մէջ», արցունքը օղու հետ կուլ տալով: Ու թա-

մատայի իրաւունքով հրամայում եմ։- վերջացաւ։ Այլեւս երկրաշարժի մասին ո'չ մի յիշատակում։ Այսօր ուրախութիւն ենք անում։ Վէրջ։

Ստում եմ։ Ինքս ինձ եմ խաբում։ Որովհետեւ մենք բոլորս, ես էլ նրանց մէջ, մտովի աղէտի նահատակների հետ ենք... Ու Գիւմրիից ուրախութիւն անելու առաքելութեամբ եկած կենսուրախ տղաները, առատ սեղանի շուրջը նստած, Ժորայի ու Տիրուլի նուագի տակ, ինձ հետ, իմ Ռազմիկ ընկերոջ հետ, անձայն եւ անարցունք արտասուում էին... կարծելով, թէ քէֆ են անում...:

Եւ այսպէս, «վիշտը սրտում» հայը հարսանիք է անում, տարելիցներ է նշում, նոր ներկայացումներ է դնում, գրքեր գրում ու ցուցահանդէսներ կազմակերպում պատասխանելով իր մէջ տակաւ ծլարձակող կեանքի եւ ժառանգական լաւատեսութեան հրամանին։ Ու նաեւ յոյսին, որ ո'չ մի դէպքում, երբեք չի մեռնում հայի հոգում։ Իսկ «թէ մեռնի, վերջինը կը մեռնի», երբ այլեւս չեն լինի յուսացող ու յուսալքուող, չեն լինի աշխարհ, կեանք ու մարդկութիւն, մարգարէանում ես դու։

Քո սիրասուն սրտահատորի, հարազատների, ընկերների, հազար-հազարների անկշռելի վիշտն ու՝ տառապանքը զգալ-ապրելուց յետոյ, յար եւ նման քո ժողովրդին, չես յուսալքում նաեւ դո՛ւ, յուշամատենի արիակամ հեղինակդ։ Չես յուսալքում, այո՛, բայց եւ այնպէս ըմբոստանում ես ծառանում երկնքի դէմ. «Ես բողոքում եմ։ Ո՛չ, ո՛չ, ո՛չ, ես ըմբոստանում եմ քո դէմ, որովհետեւ դու դաժան ես ու անգութ։ Դո՛ւ, դո՛ւ... անաստ-

ուած ես, Աստուած... Ես Նարեկացին չեմ, որ-
պէսզի այսքան անմեղ զոհեր տեսնելուց յետոյ,
ուժ գտնեմ իմ մէջ ներելու քեզ»:

Այո՛, Նարեկացի չես սիրելի Ռազմիկ, այլ
Շիրակացի, որ զգալով, ապրելով ծանրագոյն տա-
ռապանք եւ անսահման վիշտ, արիաքար յանձ-
նառու եղար պատմելու աշխարհին, մերազնէից եւ
այլազանց, մեծագոյն կործանողմաներից ու նա-
հատակութիւններից մէկի մասին: Ահա թէ ինչ-
պէ՛ս եւ որտեղի՛ց գտար այդ ուժը ու ներեցիր
Աստծուն, ներեցիր այլեւ աղերսեցիր նրան պաղա-
տանօք: «Ասա, ասա ինձ, ես ինչպէ՞ս գրիչ
վերցնեմ...»:

Ու վերցրեցիր, ու գրեցիր ու պատմեցիր քո
ժողովրդի հերթական վերջին «Մատեան Ողբեր-
գութեան»ը, որ բարեսիրտ նրբանկատութեամբ
«Յուշամատեան» ես անուանել: Գրքի վերոյիշեալ
եւ ուրիշ էջեր, որոնցում արտայայտուած միտք
ու խոհերի յանդգնութիւնը, զգացումների
ահագնած թափը եւ զղջումի նախաստեղծ անկեղծու-
թիւնը Պ. Դուրեանի հոգեխռով «Տրտունջ»ը,

այն կարեւոր տարբերութեամբ, որ քո Յուշամատեանն իր ամբողջութեան
մէջ լաւատեսական է, յուսալի եւ յուսադրող: Եւ այլ կերպ լինել չէր կարող,
քանի որ հեռուն թողած երկիր ու ժողովուրդ կայ, հող, տուն, արեւ ու
չիրիմներ կան, որ կանչուեմ են, որ սպասուեմ են ու անհամբերանում: Ու
գրում ես. «Մարտինն այստեղ, անդրովկիանոսեան այս հեռուներում, փոր-
ձում է թարմ պահել անմոռաց մօր, կնոջ եւ որդու յիշատակը: Արդեօ՞ք
ճակատագիրը կ'օգնի նրան, որ ընտանիքն առած վերադառնայ հայրենի տուն:
Այնտեղ են իր հարազատները, հողը եւ արեւը: Այնտեղ՝ Շիրակում են մնացել
անմոռաց ու թանկ չիրիմները»: Գրում ես ու կոչ անում. «Այս հեռուններից
ուզում եմ խնդրել սիրելիներո՛ւ, ետ դարձէք գերեզմանատնից: Եկէ՛ք դէպի
կեանք: Մի՛ ստեղծէք հանգուցեալի պաշտամունք: Եթէ պաշտամունք, ապա
միայն ապրողի»:

Դու մեծապէս իրաւացի ես: Այո՛, կեանքի՛ եւ ապրողի՛ պաշտամունք:

Ի պատիւ քեզ եւ յուրախութիւն մեզ բոլորիս պիտի յայտարարեմ, որ շղերական իրադարձութիւնների, համընդհանուր նահատակութեան եւ մարդկային աղետարար տառապանքների մասին վկայող-պատմող այս աշխատութիւնը, ինչքան էլ զարմանալի է ու անսպասելի, իր ընթերցողին չի մղում յուսահատութեան, ինքնալքումի եւ անտարբերութեան: Ընդհակառակը, նրա մէջ արթնացնում է կործանածը վերաշինելու, լքուածները սրտապնդելու, հիւանդ ու տկարները բուժել-կազդուրելու, կեանքում նահատակների թափուր թողած տեղերը զբաղեցնելու, ապրելու, ստեղծել-արարելու, նախկինի պէս նորից ուրախ, անհոգ ծիծաղելու կենսանորոգ տրամադրութիւններ: Այսպէս՝ որովհետեւ այդ հիւանալի գիրքը երկնել ես, նրան քո շնչից շունչ եւ քո արիւնից արիւն ես տուել դո՛ւ, բարի, լուսաւոր ու շուայ հոգի: Եւ երկնել էս տաղանդով, մարդկային հոգու գեղեցկութիւնները զգալու եւ վեր հանելու անվրէպ զգացողութեամբ, գրական օժտուածութեամբ, արուեստի հրաշքով:

Այո՛, «Յուշամատեան»դ գրուած է բարձրակարգ հայերէնով, որ սեղմ է, արտայայտիչ, հիւթեղ եւ մարդկային մտածումների եւ զգացումների ամենանրբին երանգներն իսկ ճշգրտութեամբ արտայայտելու չափ կերպրնկալ ու ճկուն: Քո խօսքին յատուկ փայլ ու հմայք են տալիս գեղեցիկ, թարմ, իմաստալի փոխաբերութիւնները, համեմատութիւնները, պատկերաւորութիւնը:

Քո երկնած «Յուշամատեան»ը, սիրելի Մադոյեան, իր տեսակի կոմիտասեան վեհաշունչ ու վեհընթաց պատարագ է, բազմաձայն, երկնահաս օրհներգութիւն, ձօնուած հայոց աշխարհի Դեկտեմբեր 7-ի անմեղ նահատակների յիշատակին: Պատարագ, որի ոսկէ բուրվառի մէջ, ցաւի, վշտի ու մորմոքի անթեղուած կրակների վրայ, իբրեւ խունկ ու ստաշխ, վառում, ծխում, չուրում են ձեր՝ քո եւ սիրելի Տիկին Ռոզայի ցաւած, վշտահար սրտերը:

Երկնային ու երկրային մխիթարութիւն նահատակների հարազատներին եւ մեզ բոլորիս, իսկ քեզ՝ վաստակեալիդ՝ մեծ շնորհակալութիւն եւ նոր արժէքներ արարելու ուժ, կորով ու խիզախութիւն:

ՍԱՐԳԻՍ ԵԱՓՈՒՃԵԱՆ